# ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

# Վ Ե Ր Լ ՈՒ Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ԼՂՀ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԻ

## 2012 ԹՎԱԿԱՆԻ I ԵՌԱՄՍՅԱԿԻ

ք. Ստեփանակերտ
2012թ.

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն


**ՆԱԽԱԲԱՆ**...............................................................................................................3

Հանրապետության անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներ...............................................................................................................4

1. Անշարժ գույքի առուվաճառքի գործարքներ...........................................................13

1.1 Բազմաբնակարան շենքերի բնակարանների և անհատական բնակելի տների /առանձնատների/ առուվաճառքի գործարքներ..........................................16

1.2 Հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների առուվաճառքի գործարքներ...............................................................................19

1.3. Հողամասերի առուվաճառքի գործարքներ.............................................................22

2. Անշարժ գույքի նվիրատվության գործարքներ.........................................................24

3. Անշարժ գույքի գրավադրման գործարքներ.............................................................26

3.1 Բազմաբնակարան շենքերի բնակարանների և բնակելի տների /առանձնատների/ գրավադրման գործարքներ.....................................................28

3.2 Հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների գրավադրման գործարքներ..............................................................................31

4. Անշարժ գույքի վարձակալության գործարքներ.......................................................33

4.1 Հողամասերի վարձակալության գործարքներ.........................................................36

5. Անշարժ գույքի ժառանգության գործարքներ..........................................................38

6. Անշարժ գույքի առաջնային գրանցումներ..............................................................40

7. Անշարժ գույքի անհատույց սեփականաշնորհման գործարքներ...........................42

8. Անշարժ գույքի մասնավորեցման գործարքներ........................................................44

# Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2012թ. I եռամսյակում

## ՆԱԽԱԲԱՆ

Սույն վերլուծությունը կատարվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներից՝ 2012թ. I եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների վերաբերյալ ստացված տվյալների և հանրապետության անշարժ գույքի շուկայից հավաքագրված տեղեկությունների դիտարկումների հիման վրա:

2012թ. I եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 1929 գործարք, որոնցից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2011թ. IV եռամսյակի համեմատ նվազել է 12,2%-ով, իսկ 2011թ. I եռամսյակի համեմատ՝ 7,6%-ով:

2012թ. I եռամսյակում հանրապետության շրջաններում գրանցված ընդհանուր գործարքներն ըստ գույքի տեսակների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| *Գույքի տեսակները* | *Հանրապետությունում* |
|---|---|
| *Բազմաբնակարան բնակելի շենքի բնակարաններ* | *405* |
| *Առանձնատներ* | *594* |
| *Արտադրական նշանակության օբյեկտներ* | *96* |
| *Հասարակական նշանակության օբյեկտներ* | *234* |
| *Ավտոտնակներ* | *43* |
| *Հողամասեր* | *557* |
| *Ընդամենը* | ***1929*** |

2011թ. IV եռամսյակի համեմատ 2012թ. I եռամսյակում ընդհանուր գործարքների նվազում է արձանագրվել Ստեփանակերտում, Ասկերանի, Մարտունու, Շուշիի և Քաշաթաղի շրջաններում:

2012թ. I եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում բարձր տոկոսաչափ կազմել են առաջնային գրանցումները՝ 20,1%, ցածր՝ 0,1%, փոխանակության գործարքները:

## Հանրապետության անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներ

2012թ. I եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 1929 գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում: Այդ քանակի փոփոխությունները՝ ըստ Ստեփանակերտ քաղաքի և շրջանների 2011թթ. I և IV եռամսյակներում և 2012թ. I եռամսյակում, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *I եռամսյակ 2011թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2012թ.* | *փոփոխումը* | *IV եռամսյակ 2011թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *781* | *3,8%* | *811* | *-21,7%* | *1036* |
| Ասկերան | *254* | *3,5%* | *263* | *-20,8%* | *332* |
| Մարտունի | *213* | *8,5%* | *231* | *-25,0%* | *308* |
| Մարտակերտ | *195* | *76,4%* | *344* | *53,6%* | *224* |
| Հադրութ | *91* | *12,1%* | *102* | *22,9%* | *83* |
| Շուշի | *162* | *-55,6%* | *72* | *-25,8%* | *97* |
| Քաշաթաղ | *392* | *-73,0%* | *106* | *-8,6%* | *116* |
| ***Հանրապետություն*** | ***2088*** | ***-7,6%*** | ***1929*** | ***-12,2%*** | ***2196*** |

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի առավել բարձր տոկոսաչափ արձանագրվել է Ստեփանակերտում՝ 42,0% (2011թ. IV եռամսյակում 47,6%), իսկ ցածր՝ 3,7% Շուշիի (2011թ. IV եռամսյակում՝ 3,6% Հադրութի) շրջաններում:

2011թ. I և IV եռամսյակներում և 2012թ. I եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունները՝ ըստ անշարժ գույքի առանձին տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| *NN* | ***Անշարժ գույքի տեսակները*** | *Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակը* | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | *I եռամսյակ 2011թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2012թ.* | *փոփոխումը* | *IV եռամսյակ 2011թ.* |
| *1* | ***բազմաբնակարան շենքի բնակարան*** | *361* | *12,2%* | *405* | *1,0%* | *401* |
| *2* | ***առանձնատուն*** | *768* | *-22,7%* | *594* | *-13,7%* | *688* |
| *3* | ***արտադրական նշ. օբյեկտ*** | *71* | *35,2%* | *96* | *-26,7%* | *131* |
| *4* | ***հասարակական նշ. օբյեկտ*** | *257* | *-8,9%* | *234* | *-13,6%* | *271* |
| *5* | ***ավտոտնակ*** | *76* | *-43,4%* | *43* | *-33,9%* | *65* |
| *6* | ***հողամաս*** | *555* | *0,4%* | *557* | *-13,0%* | *640* |
| | ***Ընդամենը*** | ***2088*** | ***-7,6%*** | ***1929*** | ***-12,2%*** | ***2196*** |

Ինչպես երևում է աղյուսակից, 2012թ. I եռամսյակում 2011թ. IV եռամսյակի համեմատ՝ պետական գրանցումների քանակի նվազում է գրանցվել բնակելի տների, հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների, ավտոտնակների և հողամասերի նկատմամբ:

2011թ.  I և IV եռամսյակներում և 2012թ. I եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված  գրանցումներն ըստ գործարքների տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| *Գործարքների տեսակները* | *I եռամսյակ 2011թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2012թ.* | *փոփոխումը* | *IV եռամսյակ 2011թ.* |
|---|---|---|---|---|---|
| ԱՌՈՒՎԱՃԱՌՔ | *274* | *-7,3%* | *254* | *-22,1%* | *326* |
| ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ | *102* | *2,0%* | *104* | *-25,2%* | *139* |
| ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ | *235* | *-14,5%* | *201* | *-9,0%* | *221* |
| ԳՐԱՎԱԴՐՈՒՄ | *342* | *-16,4%* | *286* | *-54,5%* | *629* |
| ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ | *109* | *41,3%* | *154* | *12,4%* | *137* |
| ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ | *10* | *10,0%* | *11* | *0,0%* | *11* |
| ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄ | *77* | *16,9%* | *90* | *76,5%* | *51* |
| ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄ | *13* | *-23,1%* | *10* | *-28,6%* | *14* |
| ԱՌԱՋՆԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄ | *535* | *-27,7%* | *387* | *58,0%* | *245* |
| ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ | *3* | *-33,3%* | *2* | *-71,4%* | *7* |
| ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ | *72* | *40,3%* | *101* | *5,2%* | *96* |
| ԱՅԼ ԳՐԱՆՑՈՒՄ | *228* | *11,4%* | *254* | *-3,8%* | *264* |
| ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱԴԱՐՈՒՄ | *88* | *-14,8%* | *75* | *33,9%* | *56* |
| ***Ընդամենը*** | ***2088*** | ***-7,6%*** | ***1929*** | ***-12,2%*** | ***2196*** |

2012թ. I եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում բարձր տոկոսաչափ կազմել են առաջնային գրանցումները՝ 20,1% (2011թ. IV եռամսյակում՝ 28,6% գրավադրման գրանցումները), ցածր՝ 0,1%, փոխանակման (2011թ. IV եռամսյակում՝ 0,3% ) գործարքները:

Ստորև ներկայացվում է հանրապետությունում 2012թ. I եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի համեմատական փոփոխությունների գրաֆիկական պատկերումները.



| N N | Գործարքների տեսակները | Ստեփանակերտ | Ասկերան | Մարտունի | Մարտակերտ | Հադրութ | Շուշի | Քաշաթաղ | Հանրապետություն | Տոկոսաչափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *1* | ԱՌՈՒՎԱՃԱՌՔ | 99 | 50 | 32 | 23 | 17 | 15 | 18 | 254 | 13,17 |
| *2* | ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ | 53 | 19 | 5 | 3 | 7 | 11 | 6 | 104 | 5,39 |
| *3* | ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ | 22 | 51 | 67 | 12 | 16 | 1 | 32 | 201 | 10,42 |
| *4* | ԳՐԱՎԱԴՐՈՒՄ | 135 | 38 | 58 | 27 | 11 | 15 | 2 | 286 | 14,83 |
| *5* | ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ | 67 | 37 | 23 | 15 | 8 | 4 | 0 | 154 | 7,98 |
| *6* | ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ | 5 | 1 | 3 | 0 | 1 | 1 | 0 | 11 | 0,57 |
| *7* | ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄ | 68 | 4 | 3 | 0 | 2 | 13 | 0 | 90 | 4,66 |
| *8* | ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄ | 4 | 1 | 1 | 3 | 0 | 1 | 0 | 10 | 0,52 |
| *9* | ԱՌԱՋՆԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄ | 57 | 13 | 17 | 249 | 12 | 5 | 34 | 387 | 20,06 |
| *10* | ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ | 0 | 0 | 2 | 0 | 0 | 0 | 0 | 2 | 0,10 |
| *11* | ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ | 94 | 3 | 2 | 0 | 0 | 0 | 2 | 101 | 5,24 |
| *12* | ԱՅԼ ԳՐԱՆՑՈՒՄ | 189 | 29 | 7 | 7 | 16 | 5 | 1 | 254 | 13,17 |
| *13* | ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱԴԱՐՈՒՄ | 18 | 17 | 11 | 5 | 12 | 1 | 11 | 75 | 3,89 |
| ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ | | 811 | 263 | 231 | 344 | 102 | 72 | 106 | 1929 | 100,0 |
| Տոկոսաչափը | | 42,04 | 13,63 | 11,98 | 17,83 | 5,29 | 3,73 | 5,50 | 100,0 | |

| *N N* | *Անշարժ գույքի տեսակները* | *Ստեփանակերտ* | *Ասկերան* | *Մարտունի* | *Մարտակերտ* | *Հադրութ* | *Շուշի* | *Քաշաթաղ* | *Հանրապետություն* | *Տոկոսաչափը* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *1* | *Բնակարան* | 311 | 6 | 23 | 13 | 17 | 35 | 0 | 405 | 21,0 |
| *2* | *Բնակելի տուն* | 162 | 59 | 50 | 241 | 26 | 18 | 38 | 594 | 30,79 |
| *3* | *Ավտոտնակ* | 37 | 3 | 1 | 0 | 0 | 2 | 0 | 43 | 2,23 |
| *4* | *Արտադ.նշ.օբ.* | 25 | 28 | 12 | 12 | 6 | 2 | 11 | 96 | 4,98 |
| *5* | *Հասար.նշ.օբ.* | 125 | 24 | 26 | 30 | 9 | 12 | 8 | 234 | 12,13 |
| *6* | *Հողամաս* | 151 | 143 | 119 | 48 | 44 | 3 | 49 | 557 | 28,87 |
| ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ | | 811 | 263 | 231 | 344 | 102 | 72 | 106 | 1929 | 100,0 |
| *Տոկոսաչափը* | | 42,04 | 13,63 | 11,98 | 17,83 | 5,29 | 3,73 | 5,50 | 100,0 | |




| | Ստեփանա-կերտ | Ասկերան | Մարտունի | Մարտա-կերտ | Հադրութ | Շուշի | Քաշաթաղ | Հանրապե-տություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2011թ. I եռամսյակ | 781 | 253 | 213 | 195 | 92 | 162 | 392 | 2088 |
| 2012թ. I եռամսյակ | 811 | 263 | 231 | 344 | 102 | 72 | 106 | 1929 |
| 2011թ. IV եռամսյակ | 1036 | 332 | 308 | 224 | 83 | 97 | 116 | 2196 |




| 2011թ. I եռամսյակ | 2012թ. I եռամսյակ | 2011թ. IV եռամսյակ |
|---|---|---|
| 361 | 405 | 401 |

### Բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական համեմատություն




| | Ստեփանա-կերտ | Ասկերան | Մարտունի | Մարտա-կերտ | Հադրութ | Շուշի | Քաշաթաղ | Հանրապե-տություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2011թ. I եռամսյակ | 247 | 30 | 14 | 5 | 8 | 56 | 1 | 361 |
| 2012թ. I եռամսյակ | 311 | 6 | 23 | 13 | 17 | 35 | 0 | 405 |
| 2011թ. IV եռամսյակ | 296 | 12 | 30 | 15 | 6 | 40 | 2 | 401 |

### Բնակելի տների /առանձնատների/ նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխման դինամիկա




| 2011թ. I եռամսյակ | 2012թ. I եռամսյակ | 2011թ. IV եռամսյակ |
|---|---|---|
| 768 | 594 | 688 |

### Բնակելի տների /առանձնատների/ նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական համեմատություն




| | Ստեփանա-կերտ | Ասկերան | Մարտունի | Մարտա-կերտ | Հադրութ | Շուշի | Քաշաթաղ | Հանրապե-տություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2011թ. I եռամսյակ | 174 | 58 | 71 | 55 | 32 | 38 | 340 | 768 |
| 2012թ. I եռամսյակ | 162 | 59 | 50 | 241 | 26 | 18 | 38 | 594 |
| 2011թ. IV եռամսյակ | 257 | 108 | 132 | 75 | 32 | 24 | 60 | 688 |

### Հասարակական նշանակության օբյեկտների նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխման դինամիկա




| 2011թ. I եռամսյակ | 2012թ. I եռամսյակ | 2011թ. IV եռամսյակ |
|---|---|---|
| 257 | 234 | 271 |

## Հասարակական նշանակության օբյեկտների նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական համեմատություն




| | Ստեփանա-կերտ | Ասկերան | Մարտունի | Մարտա-կերտ | Հադրութ | Շուշի | Քաշաթաղ | Հանրապե-տություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2011թ. I եռամսյակ | 169 | 22 | 11 | 17 | 5 | 31 | 2 | 257 |
| 2012թ. I եռամսյակ | 125 | 24 | 26 | 30 | 9 | 12 | 8 | 234 |
| 2011թ. IV եռամսյակ | 171 | 24 | 10 | 20 | 8 | 21 | 17 | 271 |

## Արտադրական նշանակության օբյեկտների նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխման դինամիկա




| 2011թ. I եռամսյակ | 2012թ. I եռամսյակ | 2011թ. IV եռամսյակ |
|---|---|---|
| 71 | 96 | 131 |


Արտադրական նշանակության օբյեկտների նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական համեմատություն
140
120
100
80
60
40
20
0
Ստեփանա-կերտ
Ասկերան
Մարտունի
Մարտա-կերտ
Հադրութ
Շուշի
Քաշաթաղ
Հանրապետ-ություն
2011թ. I եռամսյակ 35 7 12 6 10 0 1 71
2012թ. I եռամսյակ 25 28 12 12 6 2 11 96
2011թ. IV եռամսյակ 56 49 11 4 7 2 2 131


Հողամասերի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխման դինամիկա
660
640
620
600
580
560
540
520
500
480
2011թ. I եռամսյակ
2012թ. I եռամսյակ
2011թ. IV եռամսյակ
555
557
640

## Հողամասերի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական համեմատություն




| | Ստեփանա-կերտ | Ասկերան | Մարտունի | Մարտա-կերտ | Հադրութ | Շուշի | Քաշաթաղ | Հանրապետ-ություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2011թ. I եռամսյակ | 95 | 136 | 103 | 111 | 35 | 27 | 48 | 555 |
| 2012թ. I եռամսյակ | 151 | 143 | 119 | 48 | 44 | 3 | 49 | 557 |
| 2011թ. IV եռամսյակ | 197 | 138 | 123 | 109 | 28 | 10 | 35 | 640 |

## Ավտոտնակների նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխման դինամիկա




| 2011թ. I եռամսյակ | 2012թ. I եռամսյակ | 2011թ. IV եռամսյակ |
|---|---|---|
| 76 | 43 | 65 |

**Ավտոտնակների նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական համեմատություն**




| | Ստեփանա-կերտ | Ասկերան | Մարտունի | Մարտա-կերտ | Հադրութ | Շուշի | Քաշաթաղ | Հանրապետություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2011թ. I եռամսյակ | 61 | 1 | 2 | 1 | 1 | 10 | 0 | 76 |
| 2012թ. I եռամսյակ | 37 | 3 | 1 | 0 | 0 | 2 | 0 | 43 |
| 2011թ. IV եռամսյակ | 59 | 1 | 2 | 1 | 2 | 0 | 0 | 65 |

## 1.Անշարժ գույքի առուվաճառքի գործարքներ

2012թ. I եռամսյակում հանրապետությունում իրականացվել է 254 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը 2011թ. IV եռամսյակի համեմատ նվազել է 22,1%-ով, իսկ 2011թ. I եռամսյակի համեմատ՝ 7,3%-ով: Առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13,2%-ը (2011թ. IV եռամսյակում՝ 15,2%):

Առուվաճառքի գործարքների քանակի բարձր տոկոսաչափ արձանագրվել է Ստեփանակերտում՝ 39,0% (2011թ. IV եռամսյակում՝ 47,2%), իսկ ցածր՝ 5,9%, Շուշիի (2011թ. IV եռամսյակում՝ 2,1% Հադրութի) շրջաններում:

2011թ. I և IV եռամսյակներում և 2012թ. I եռամսյակում Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակի փոփոխությունները ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *I եռամսյակ 2011թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2012թ.* | *փոփոխումը* | *IV եռամսյակ 2011թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *97* | *2,1%* | *99* | *-35,7%* | *154* |
| Ասկերան | *61* | *-18,0%* | *50* | *-21,9%* | *64* |
| Մարտունի | *14* | *2,3 անգամ* | *32* | *3,2%* | *31* |
| Մարտակերտ | *34* | *-32,4%* | *23* | *-34,3%* | *35* |
| Հադրութ | *15* | *13,3%* | *17* | *2,4անգամ* | *7* |
| Շուշի | *46* | *-67,4%* | *15* | *-21,1%* | *19* |
| Քաշաթաղ | *7* | *2,6 անգամ* | *18* | *12,5%* | *16* |
| ***Հանրապետություն*** | ***274*** | ***-7,3%*** | ***254*** | ***-22,1%*** | ***326*** |

2011թ. I և IV եռամսյակներում և 2012թ. I եռամսյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը և նրանց փոփոխումներն՝ ըստ անշարժ գույքի առանձին տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| *N* | *Անշարժ գույքի տեսակները* | *Առուվաճառքի գործարքների քանակը* | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | *I եռամսյակ 2011թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2012թ.* | *փոփոխումը* | *IV եռամսյակ 2011թ.* |
| **1** | *բազմաբնակարան շենքի բնակարան* | *64* | *-35,9%* | *41* | *-46,1%* | *76* |
| **2** | *առանձնատուն* | *50* | *-20,0%* | *40* | *-16,7%* | *48* |
| **3** | *արտադրական նշ. օբյեկտ* | *5* | *4,6 անգամ* | *23* | *53,3%* | *15* |
| **4** | *հասարակական նշ. օբյեկտ* | *27* | *18,5%* | *32* | *33,3%* | *24* |
| **5** | *ավտոտնակ* | *8* | *-62,5%* | *3* | *-75,0%* | *12* |
| **6** | *հողամաս* | *120* | *-4,2%* | *115* | *-23,8%* | *151* |
| | ***Ընդամենը*** | ***274*** | ***-7,3%*** | ***254*** | ***-22,1%*** | ***326*** |

Առուվաճառքի գործարքներում բարձր տոկոսաչափ են կազմում հողամասերի և բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ առուվաճառքի գործարքները՝ համապատասխանաբար 45,3%-ը և 16,1%-ը:



| N N | Անշարժ գույքի տեսակները | Ստեփանակերտ | Ասկերան | Մարտունի | Մարտակերտ | Հադրութ | Շուշի | Քաշաթաղ | Հանրապետություն | Տոկոսաչափ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *1* | *Բնակարան* | 30 | 1 | 1 | 2 | 1 | 6 | 0 | **41** | 16,14 |
| *2* | *Բնակելի տուն* | 9 | 9 | 4 | 9 | 4 | 1 | 4 | **40** | 15,75 |
| *3* | *Ավտոտնակ* | 3 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | **3** | 1,18 |
| *4* | *Արտադ.նշ.օբ.* | 1 | 7 | 5 | 0 | 2 | 1 | 7 | **23** | 9,05 |
| *5* | *Հասար.նշ.օբ.* | 16 | 3 | 1 | 1 | 0 | 7 | 4 | **32** | 12,60 |
| *6* | *Հողամաս* | 40 | 30 | 21 | 11 | 10 | 0 | 3 | **115** | 45,28 |
| | **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ** | **99** | **50** | **32** | **23** | **17** | **15** | **18** | **254** | 100,0 |
| | *Տոկոսաչափը* | 38,98 | 19,68 | 12,60 | 9,05 | 6,69 | 5,91 | 7,09 | 100,0 | |

**Անշարժ գույքի առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական համեմատություն**




| | Ստեփանա-կերտ | Ասկերան | Մարտունի | Մարտա-կերտ | Հադրութ | Շուշի | Քաշաթաղ | Հանրապետ-ություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2011թ. I եռամսյակ | 97 | 61 | 14 | 34 | 15 | 46 | 7 | 274 |
| 2012թ. I եռամսյակ | 99 | 50 | 32 | 23 | 17 | 15 | 18 | 254 |
| 2011թ. IV եռամսյակ | 154 | 64 | 31 | 35 | 7 | 19 | 16 | 326 |

## 1.1. Բազմաբնակարան շենքերի բնակարանների և անհատական բնակելի տների /առանձնատների/ առուվաճառքի գործարքներ

2012թ. I եռամսյակում հանրապետությունում բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ իրականացվել է 41 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը 2011թ. IV եռամսյակի համեմատ նվազել է 46,1%, իսկ 2011թ. I եռամսյակի համեմատ՝ 35,9%: Բազմաբնակարան շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների բարձր տոկոսաչափ գրանցվել է Ստեփանակերտում՝ 73,2% (2011թ. IV եռամսյակում՝ 75,0%):

2011թ. IV և 2012թ. I եռամսյակներում հանրապետության մի շարք քաղաքային համայնքներում վաճառված բազմաբնակարան շենքերի բնակարանների առուվաճառքների գործարքների պայմանագրային գների, մեր կողմից կատարված հարցումների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջին գները և նրանց փոփոխման սահմանները.

| *Քաղաքներ* | *2011թ. IV եռամսյակ* | | | *2012թ. I եռամսյակ* | | | *փոփոխումը 2011թ. IV եռամսյակի նկատմամբ* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *1 քմ արժեքը /ՀՀ դրամ/* | | | *1 քմ արժեքը /ՀՀ դրամ/* | | | |
| | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | |
| Ստեփանակերտ | 160 000 | 290 000 | **225 000** | 180 000 | 290 000 | **235 000** | ***4,4%*** |
| Ասկերան | 41 000 | 50 000 | **45 500** | 41 500 | 52 000 | **46 750** | ***2,7%*** |
| Մարտունի | 37 500 | 48 000 | **42 750** | 38 000 | 49 500 | **43 750** | ***2,3%*** |
| Մարտակերտ | 14 000 | 28 000 | **21 000** | 14 500 | 28 500 | **21 500** | ***2,4%*** |
| Հադրութ | 19 000 | 29 500 | **24 250** | 19 500 | 30 000 | **24 750** | ***2,1%*** |
| Շուշի | 40 000 | 85 000 | **62 500** | 43 000 | 88 000 | **65 500** | ***4,8%*** |

2012թ. I եռամսյակում հանրապետությունում առանձնատների նկատմամբ իրականացվել է 40 առուվաճառքների գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը 2011թ. IV եռամսյակի համեմատ նվազել է 16,7%-ով, իսկ 2011թ. I եռամսյակի համեմատ՝ 20,0%-ով:
Առանձնատների առուվաճառքների գործարքների քանակի բարձր տոկոսաչափ գրանցվել է Ստեփանակերտում, Ասկերանում և Մարտակերտի շրջաններում ՝ 22,5% (2011թ. IV եռամսյակում՝ 37,5%):

2011թ. IV և 2012թ. I եռամսյակներում հանրապետության մի շարք քաղաքային համայնքներում վաճառված բնակելի տների առուվաճառքների գործարքների պայմանագրային գների, մեր կողմից իրականացված անշարժ գույքի շուկայի դիտարկումների արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական նվազագույն, առավելագույն և միջին գները ու նրանց փոփոխումները .

| *Քաղաքներ* | *2011թ. IV եռամսյակ* | | | *2012թ. I եռամսյակ* | | | *փոփոխումը 2011թ. IV եռամսյակի նկատմամբ* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *միջինը 200 քմ շինությամբ և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /ՀՀ դրամ/* | | | *միջինը 200 քմ շինությամբ և միջինը 1000քմ տնամերձով բնակելի տան արժեքը /ՀՀ դրամ/* | | | |
| | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | |
| Ստեփանակերտ | 21 000 000 | 35 500 000 | **28 250 000** | 22 000 000 | 36 500 000 | **29 250 000** | ***3,5%*** |
| Ասկերան | 4 000 000 | 4 500 000 | **4 250 000** | 4 100 000 | 4 600 000 | **4 350 000** | ***2,3%*** |
| Մարտունի | 3 300 000 | 4 000 000 | **3 650 000** | 3 350 000 | 4 100 000 | **3 725 000** | ***2,1%*** |
| Մարտակերտ | 1 600 000 | 2 800 000 | **2 200 000** | 1 650 000 | 2 840 000 | **2 245 000** | ***2,0%*** |
| Հադրութ | 1 500 000 | 2 700 000 | **2 100 000** | 1 500 000 | 2 780 000 | **2 140 000** | ***1,9%*** |
| Շուշի | 2 700 000 | 5 300 000 | **4 000 000** | 2 750 000 | 5 500 000 | **4 125 000** | ***3,1%*** |



## Բազմաբնակարանի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական համեմատություն



| | Ստեփանա-կերտ | Ասկերան | Մարտունի | Մարտա-կերտ | Հադրութ | Շուշի | Քաշաթաղ | Հանրապե-տություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2011թ. I եռամսյակ | 30 | 6 | 1 | 1 | 0 | 25 | 1 | 64 |
| 2012թ. I եռամսյակ | 30 | 1 | 1 | 2 | 1 | 6 | 0 | 41 |
| 2011թ. IV եռամսյակ | 57 | 6 | 3 | 2 | 0 | 8 | 0 | 76 |

## Բնակելի տների /առանձնատների/ առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխման դինամիկա



| 2011թ. I եռամսյակ | 2012թ. I եռամսյակ | 2011թ. IV եռամսյակ |
|---|---|---|
| 50 | 40 | 48 |




| | Ստեփանա-կերտ | Ասկերան | Մարտունի | Մարտա-կերտ | Հադրութ | Շուշի | Քաշաթաղ | Հանրապետություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2011թ. I եռամսյակ | 14 | 6 | 8 | 8 | 8 | 4 | 2 | 50 |
| 2012թ. I եռամսյակ | 9 | 9 | 4 | 9 | 4 | 1 | 4 | 40 |
| 2011թ. IV եռամսյակ | 18 | 4 | 5 | 7 | 1 | 4 | 9 | 48 |

## 1.2. Հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների առուվաճառքի գործարքներ

2012թ. I եռամսյակում հանրապետությունում հասարակական նշանակության օբյեկտների նկատմամբ իրականացվել է 32 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը 2011թ. IV եռամսյակի համեմատ աճել է 33,3%-ով, իսկ 2011թ. I եռամսյակի համեմատ՝ 18,5%-ով: 2012թ. I եռամսյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 12,6%-ը գրանցվել է հասարակական նշանակության օբյեկտների նկատմամբ (2011թ. IV եռամսյակում՝ 7,4%):

Հասարակական նշանակության օբյեկտների առուվաճառքի գործարքների քանակի բարձր տոկոսաչափ գրանցվել է Ստեփանակերտում՝ 50,0% (2011թ. IV եռամսյակում՝ 54,2%):

2012թ. I եռամսյակում հանրապետությունում արտադրական նշանակության օբյեկտների նկատմամբ իրականացվել է 23 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը 2011թ. IV եռամսյակի համեմատ աճել է 53,3%-ով, իսկ 2011թ. I եռամսյակի համեմատ՝ 4,6 անգամ:

2012թ. I եռամսյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 9,1%-ը գրանցվել է արտադրական նշանակության օբյեկտների նկատմամբ (2011թ. IV եռամսյակում՝ 4,6%):

Ստորև ներկայացվում է 2012թ. I եռամսյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների քանակի համեմատական փոփոխությունների գրաֆիկական գծապատկերը.




| 2011թ. I եռամսյակ | 2012թ. I եռամսյակ | 2011թ. IV եռամսյակ |
|---|---|---|
| 27 | 32 | 24 |




| | Ստեփանա-կերտ | Ասկերան | Մարտունի | Մարտա-կերտ | Հադրութ | Շուշի | Քաշաթաղ | Հանրապե-տություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2011թ. I եռամսյակ | 19 | 1 | 0 | 2 | 1 | 4 | 0 | 27 |
| 2012թ. I եռամսյակ | 16 | 3 | 1 | 1 | 0 | 7 | 4 | 32 |
| 2011թ. IV եռամսյակ | 13 | 5 | 1 | 0 | 1 | 4 | 0 | 24 |







| | Ստեփանա-կերտ | Ասկերան | Մարտունի | Մարտա-կերտ | Հադրութ | Շուշի | Քաշաթաղ | Հանրապետ-ություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2011թ. I եռամսյակ | 1 | 0 | 0 | 1 | 3 | 0 | 0 | 5 |
| 2012թ. I եռամսյակ | 1 | 7 | 5 | 0 | 2 | 1 | 7 | 23 |
| 2011թ. IV եռամսյակ | 3 | 9 | 0 | 2 | 1 | 0 | 0 | 15 |

## 1.3. Հողամասերի առուվաճառքի գործարքներ

2012թ. I եռամսյակում հանրապետությունում հողամասերի նկատմամբ իրականացվել է 115 առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը 2011թ. IV եռամսյակի համեմատ նվազել է 23,8%-ով, իսկ 2011թ. I եռամսյակի համեմատ՝ 4,2%-ով: 2012թ. I եռամսյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 45,3%-ը գրանցվել է հողամասերի նկատմամբ (2011թ. IV եռամսյակում՝ 46,5%):

Հողամասերի առուվաճառքի գործարքների քանակի բարձր տոկոսաչափ գրանցվել է Ստեփանակերտում՝ 34,8% (2011թ. IV եռամսյակում՝ 35,1%):

2012թ. I եռամսյակում հանրապետության շրջաններում (Ստեփանակերտ քաղաքում) վաճառված հողամասերի առուվաճառքների գործարքների պայմանագրային գների, մեր կողմից կատարված հարցումների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջին գները և նրանց փոփոխման սահմանները.

| ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԵՐ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Տարածաշրջան | Միավորների քանակ | Մակերես /քմ/ | 1մ² արժեքը դրամ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջինը |
| Ստեփանակերտ | 24 | 24445 | 274 | 4258 | 1045 |
| Ասկերան | 21 | 31770 | 58 | 752 | 185 |
| Մարտունի | 3 | 7056 | 13 | 76 | 45 |
| Մարտակերտ | 2 | 1075 | 34 | 122 | 79 |
| Հադրութ | 5 | 7930 | 10 | 120 | 24 |
| Քաշաթաղ | 1 | 50 | 50 | 2000 | 1025 |

| ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Տարածաշրջան | Միավորների քանակ | Մակերես /քմ/ | 1մ² արժեքը դրամ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջինը |
| Ստեփանակերտ | 15 | 5558 | 275 | 10269 | 3778 |
| Ասկերան | 5 | 3513 | 27 | 3568 | 714 |
| Մարտունի | 1 | 40 | 50 | 200 | 125 |
| Մարտակերտ | 6 | 3794 | 38 | 1500 | 420 |
| Հադրութ | 2 | 150 | 140 | 480 | 310 |
| Քաշաթաղ | 2 | 4191 | 31 | 1847 | 939 |

| ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Տարածաշրջան | Միավորների քանակ | Մակերես /քմ/ | 1մ² արժեքը դրամ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջինը |
| Ստեփանակերտ | 1 | 10000 | 200 | 800 | 500 |
| Ասկերան | 3 | 38830 | 100 | 800 | 352 |
| Մարտունի | 17 | 127176 | 3 | 698 | 96 |
| Մարտակերտ | 3 | 35660 | 2 | 116 | 65 |
| Հադրութ | 3 | 20560 | 3 | 77 | 28 |

Ստորև ներկայացվում է 2012թ. I եռամսյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների քանակի համեմատական փոփոխությունների գրաֆիկական գծապատկերը.






## 2. Անշարժ գույքի նվիրատվության գործարքներ

2012թ. I եռամսյակում նվիրատվության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5,4%-ը (2011թ. IV եռամսյակում՝ 6,5%-ը ), իրականացվել է 104 նվիրատվության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում, որոնց քանակը 2011թ. IV եռամսյակի համեմատ նվազել է 25,2%-ով,իսկ 2011թ. I եռամսյակի համեմատ աճել է 2,0%-ով:

Նվիրատվության գործարքների քանակի բարձր տոկոսաչափ արձանագրվել է Ստեփանակերտում՝ 51,0% (2011թ. IV եռամսյակում՝ 52,5%), իսկ ցածր՝ 2,9%, Մարտակերտի (2011թ. IV եռամսյակում՝ 3,6% Քաշաթաղի) շրջաններում:

2011թ. I և IV եռամսյակներում և 2012թ. I եռամսյակում նվիրատվության գործարքների քանակը և նրանց փոփոխումներն՝ ըստ անշարժ գույքի տեսակների ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *Անշարժ գույքի տեսակները* | *Նվիրատվության անշարժ գույքի քանակը* | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | *I եռամսյակ 2011թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2012թ.* | *փոփոխումը* | *IV եռամսյակ 2011թ.* |
| *1* | *բ/բ շենքի բնակարան* | *21* | *33,3%* | *28* | *-24,3%* | *37* |
| *2* | *առանձնատուն* | *44* | *4,5%* | *46* | *-23,3%* | *60* |
| *3* | *արտադրական նշ. օբ.* | *2* | *2,0 անգամ* | *4* | *2,0 անգամ* | *2* |
| *4* | *հասարակական նշ. օբ.* | *13* | *-30,8%* | *9* | *0,0%* | *9* |
| *5* | *ավտոտնակ* | *3* | *-33,3%* | *2* | *2,0 անգամ* | *1* |
